

## ՄԻ ԽՈՇՈՐ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Աբգար Յովհաննիսեանի մահուան երկրորդ տարեդարձի  
առթիւ)

ՄԵՌԱՅ Աբգար Յովհաննիսեանը, չքացաւ ասպա-  
րիզից մի ականաւոր հասարակական գործիչ, խորա-  
սուզուեց յաւիտենականութեան մէջ մի խոշոր անձնաւո-  
րութիւն...

Խոշոր մարդկանց առանձնայատկութիւններից մէկն  
էլ այն է, որ նրանք իրանց մահովն անդամ զգաս-  
տացնում են իրանց հայրենի հասարակութիւնը, ստիպում  
են նրան քննել իր մօտ անցեալը և լուրջ ուշադրու-  
թեամբ նայել իր ներկային...

Հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանը այն հաղուա-  
գիւտ հասարակական գործիչներից մէկն էր, որոնց  
նշանաբանը էժանագին ժողովրդականութիւն ձեռք  
բերելը չի, այդ պատճառով նա ոչ մի բոպէ իր  
երկարաւու գործունէութեան ընթացքում չշոյեց ամբոխի  
բնազդները նրա սէրը վայելելու համար...

Մեծ քաջութիւն չի, պաշտպան հանդիսանալ  
յաղթանակող ծշմարտութիմնների, որոնք սովորաբար  
աւելի մատչելի են լինում ամբոխի հասկացողութեանը,  
թէև ոչ միշտ նրա օդախն են ծառայում... Այդ տե-  
սակ «Ճշմարտութիւններ» պաշտպանողների ճանապարհը  
միշտ հարթ է լինում և նրանք էժանագին յաղթանակ-  
ներով են ընթանում իրանց հարթ ու հաւասար  
ճանապարհով...

Բայց հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը իր ամբողջ

գործունէութեան ընթացքում միշտ քաջութիւն ունեցաւ ջատազով հանդիսանալ հալածուած ու ոտնակոխ արած ճշմարտութեան և թագալոյծ արած գաղափարների... Եւ միշտ փուշ ու տատասկ է լինում այդպիսի գործիշների ճանապարհի վրայ...

Եատ աննպաստ ժամանակ հասարակական ասպարէզ դուրս եկաւ հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը։ Այդ մի ցաւալի ժամանակ էր, երբ զանազան ճրճռան ու փքուն ֆրազներ և անդուսպ ու անտակտ հայհօյանքներ մեր նուիրական սրբութիւնների դէմ խլացրել էին հասարակութեան ականջը, շփոթելնրա միտքը և անընդունակ դարձրել նրան լսելու և ըմբռնելու աւելի լուրջ և ողջամիտ գաղափարներ...

Եւ այդ՝ մեզ համար դժբախտ ժամանակում հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը միակ հասարակական գործիշն էր, որ շատ որոշ կերպով ըմբռնում էր մեր հասարակութեանը սպառնացող վտանգները և կատաղի ու անհաւասար կուիւ մզում այն անմիտ ու կործանիչ մոլորութեան դէմ, թէ մեր նուիրականը և հարազատը մոռանալում և ուրանալումն է մեր փրկութիւնը և մեր յառաջադիմութիւնը...

Հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը մենակ էր այդ անհաւասար կուում իր բազմաթիւ թշնամիների դէմ, բայց նա ոչ մի բոպէ շընկճուեց։ Նա հաստատ ու անսասան գնաց իր ճանապարհով, մինչև օր օտարները աւելի լաւ ըմբռնեցին ու դնահատեցին նրա ուղղութեան և պաշտպանած գաղափարների ճշմարտութիւնը, քան թէ մենք...

Բնական է, որ այդ անհաւասար կուում հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը գործեց նաև շատ սխալներ։ Բայց նա երբէք չգործեց սխալներից կամ աւելի ճիշտը յանցանքներից ամենամեծը՝ նա երբէք չշոյեց ամբոխը նրան դուր գալու և ժողովրդականութիւն վաստակելու համար...

Ընդհակառակը, Ա. Յովհաննիսեանը միշտ աշխատեց անխախտ պահել ու պաշտպանել այն, ինչ որ սուրբ է, հարազատ և նուիրական մեզ համար և որը միայն կարող էր փրկել մեր հասարակութիւնը բարոյական անդառնալի կորստից...

Անցան տարիներ և իրականութեան դառը դասերը մեզ ապացուցեցին, որ ճշմարտութիւնը Ա. Յովհաննիսեանի կողմն էր և որ յիրաւի մենք մեր ձեռքով քանդում էինք մեր հասարակական շենքի հիմքերը... Եւ քանի աւելի հասունանայ մեր հասարակութիւնը, նա այնքան աւելի ու աւելի կըմբռնի ու կդնահատի Ա. Յովհաննիսեանի գործունէութիւնը...

Կանցնեն դարձեալ տարիներ, երեան կդայ նոր սերունդ, որի համար գոյութիւն չեն ունենայ այսօրուայ մանր~մունք հաշիւները, բայց որի մէջ վառ կմնայ այն մարդու յիշատակը, որ մտքերի ընդհանուր շփութութեան և խառնակութեան մէջ կարօղացաւ անխախտ պահել ու պաշտպանել մեր հասարակական նուիրական սրբութիւնները և մեր փրկութեան միակ յօյսն ու ապաւէնը...

Ե. ԹԱՂԻՍՆՈՍԵԱՆ

Բագու